

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/2

11 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ռաֆայել Խումարյանի 27.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 17.10.2014 թ-ի թիվ 6104257 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Ռաֆայել Խումարյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Ռաֆայել Խումարյանի մոտ իրականացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման (այսուհետ՝ ստուգում) արդյունքում ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչության աշխատակիցների կողմից 17.10.2014 թ-ին կազմվել է թիվ 6104257 ստուգման ակտը (այսուհետ՝ Ակտ), ըստ որի Ա/Ձ Ռաֆայել Խումարյանին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով:

Տվյալ ակտի կազմման համար հիմք է ընդունվել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 23.09.2014 թ-ի թիվ 6203750 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 6203750 արձանագրությունը՝ ըստ որի խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները: Արդյունքում, ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով կիրառվել է նույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը:

Հարկ է նշել, որ 17.10.2014 թ-ին կազմված թիվ 6104257 ակտի 1-ին կետում տուգանք նշանակելու համար հիմք հանդիսացող թիվ 6203750 հանձնարարագրի շրջանակներում կազմված թիվ 6203750 արձանագրությունը առ 23.09.2014 թ-ի, մինչ օրս չի հանձնվել ոչ փոստով, ոչ առձեռն և ոչ էլ այլ եղանակով, սակայն դրա հիման վրա ընթացք է տրվել և կազմվել է ստուգման Ակտի նախագիծ, իսկ հետագայում նաև Ակտ:

Ըստ գանգատի, իրականացված հսկիչ գնման ընթացքում խախտվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.4, 1.5 և 1.6 կետերի պահանջները: Խախտվել են նաև ՀՀ կառավարության 27 նոյեմբերի 2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի ա) ենթակետի պահանջները, ըստ որի վաճառված ապրանքի հետընդունման ակտի մեկ օրինակը հսկիչ գնման մասին արձանագրության մեկ օրինակի հետ միասին հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, որն առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնում է գրավոր: Հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձը հսկիչ գնման ժամանակ տպված ՀԴՄ-ի չեկի (կտրոնի) վրա կատարում է «վերադարձ» նշումը, լրացնում ամսաթիվը, ամիսն ու տարեթիվը և ստորագրում է: Նշված քայլերից ոչ մեկը չի իրականացվել և ներկայումս գանգատաբերը չունի ետ ընդունված ապրանքների ակտի օրինակ, ինչին տեսուչները բանավոր բացատրել են, որ հետագայում կտրամադրեն:

Ըստ գանգատի, խախտվել են նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 1-ին կետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Ռաֆայել Խումարյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 17.10.2014 թ-ի թիվ 6104257 ստուգման ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն Արաբկիրի ՀՏ պետի 23.09.2014 թ-ի թիվ 6203749 հանձնարարագրի Ա/Ձ Ռաֆայել Խումարյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 07.10.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6203749 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

գլխավոր հարկային տեսուչ Ռ.Վարդանյանի կողմից Ա/Ձ Ռաֆայել Խումարյանին պատկանող ք.Երևան, Շինարարների 26-39 հասցեում գտնվող խանութից 07.10.2014 թ-ին ժամը 17:35-ին կատարվել է հսկիչ գնում 4500 դրամի չափով, որի դիմաց վճարված կանխիկ գումարը վաճառողուհի Լաուրա Խումարյանը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը ծանոթացման: Այնուհետև, ժամը 17:41-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն 11000 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 4500 դրամը, ժամը 17:41-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 17:42-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ գումարով 4500 դրամ:

Գնված ապրանքը հարկային ծառայողների կողմից ետ է վերադարձվել և ետ է ստացվել հսկիչ գնման գումարը, որից հետո տպվել է վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի կողմից 09.10.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6104257 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Ռաֆայել Խումարյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 14.07.2014 թ-ի թիվ 6104257 ստուգման ակտը, որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը և գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 07.10.2014 թ-ի թիվ 6203749 արձանագրությունում նկարագրվածը, ըստ էության, չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես պարզվեց, որ հսկիչ գնումն իրականացվել է ոչ թե արձանագրությունում նշված գլխավոր հարկային

տեսույց Ռ.Վարդանյանի կողմից, այլ՝ հսկիչ գնման հանձնարարագրում չընդգրված քաղաքացու կողմից:

Վերոգրյալից հետևում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրությունը (հսկիչ գնում) իրականացվել է հետևյալ իրավանորմների դրույթների խախտմամբ:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.4 կետի համաձայն. «Հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսվարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները և հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի կնիքով: Ընդ որում, հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում հանձնարարագրում նշվում են նաև այդ անձի տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրային տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը):»:

Քննարկվող դեպքում հսկիչ գնումն իրականացվել է ֆիզիկական անձի կողմից, որի տվյալները սահմանված կարգով ընդգրված չեն եղել Արաբկիրի ՀՏ պետի կողմից հրապարակված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրության 23.09.2014 թ-ի թիվ 6203749 հանձնարարագրում:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Ռաֆայել Խումարյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 17.10.2014 թ-ի թիվ 6104257 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ԱՐԻՐՈՒՄՅԱՆ